Հավելված N 1
ՀՀ կառավարության 2015 թ.
օգոստոսի 6-ի նիստի N 37
արձանագրային որոշման

Ծ Ր Ա Գ Ի Ր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ - ՔԱՂԱՔԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐԻՆ ՄԱՐԶԱԲՆԱԿ ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ ՄԱՍ-ՆԱԿՑՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐԻ ՍՏԵՂԾՄԱՆ

Ի. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

1. Հայաստանի Հանրապետության մարզերում երիտասարդության ակտիվության համեմատաբար ցածր մակարդակի հետևանքով դեռևս պահպանվում է Երևանի և Հայաստանի Հանրապետության մարզերի միջև շոշափելի տարբերություն՝ երիտասարդների՝ պետության հասարակական-քաղաքական գործընթացներին մասնակցության և տեղեկացվածության տեսանկյունից: Այսօր երիտասարդական պետական քաղաքականության հիմնական նպատակներից է պետության հասարակական-քաղաքական խնդիրների լուծման գործընթացներում մարզաբնակ երիտասարդության ներգրավվածության մակարդակի բարձրացումը, ինչը միաժամանակ կնպաստի երիտասարդների արտագաղթի և ներքին միգրացիոն գործընթացների կանխմանը:

II. ԾՐԱԳՐԻ ՆՊԱՏԱԿՆ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԸ

2. Ծրագրի նպատակն է հասարակական-քաղաքական գործընթացներին մարզաբնակ երիտասարդության ներգրավվածության մակարդակի բարձրացումը և մասնակցության խթանումը:

3. Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ է լուծել հետևյալ խնդիրները՝

1) ապահովել կազմակերպչական մեխանիզմի ներդրումն ու աշխատանքների կանոնակարգումը.

2) զարգացնել մարզային երիտասարդական կազմակերպությունների կարողություն-ները.

3) կատարելագործել մարզպետարանների աշխատակազմերի համապատասխան մասնագետների՝ երիտասարդության ոլորտի վերաբերյալ մասնագիտական հմտությունները:

III. ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

4. Հասարակական-քաղաքական գործընթացներին հանրային կյանքի տարբեր բնագավառներում երիտասարդների մասնակցության խթանման ու երիտասարդական կազմակերպությունների գործունեության ակտիվացմանը նպաստելու համար կստեղծվի միջգերատեսչական հանձնաժողով (այսուհետ՝ Հանձնաժողով): Հանձնաժողովը բաղկացած կլինի Հայաստանի Հանրապետության սպորտի և երիտասարդության հարցերի, Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության, Հայաստանի Հանրապետության առողջապահության, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի, Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարությունների ներկայացուցիչներից: Հանձնաժողովը կհամակարգի ծրագրի իրականացումը:

5. Հանձնաժողովի և մարզային երիտասարդական կազմակերպությունների, մարզպետին կից երիտասարդական խորհուրդների ներկայացուցիչների և մարզպետարանների աշխատակազմերի համապատասխան աշխատակիցների հետ հանդիպումները կկազմակերպվեն Հայաստանի Հանրապետության սպորտի և երիտասարդության հարցերի նախարարության (այսուհետ՝ Նախարարություն) կողմից՝ որպես ոլորտը համակարգող պետական լիազոր մարմին: Հանձնաժողովի աշխատանքներն ուղղված են նպաստելու մարզաբնակ երիտասարդության շրջանում հավասար հնարավորությունների ապահովմանը, միասնական երիտասարդական քաղաքականության իրականացմանը, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության տարածքային համաչափ զարգացմանը:

IV. ԾՐԱԳՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ

6. Հաշվի առնելով հասարակական-քաղաքական գործընթացներին հանրային կյանքի տարբեր բնագավառներում երիտասարդների մասնակցության խթանման ու երիտասարդական կազմակերպությունների գործունեության ակտիվացման իներցիոն բնույթը, ինչպես նաև իրականացվող միջոցառումների և ծրագրերի շարունակական ապահովման անհրաժեշտությունը՝ սույն ծրագրի գործունեությունը կսկսի 2015 թվականին և կավարտվի 2017 թվականին:

V. ԾՐԱԳՐԻ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄԸ

7. Ծրագիրը կիրականացվի Հայաստանի Հանրապետության օրենքով չարգելված միջոցների հաշվին և պետական կառավարման կամ տեղական ինքնակառավարման մարմինների բյուջեներում լրացուցիչ ծախսեր չի առաջացնի:

VI. ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ՉԱՓԱՆԻՇԸ

8. Հայաստանի Հանրապետության հասարակական-քաղաքական գործընթացներին մարզաբնակ երիտասարդության մասնակցության արդյունավետ մեխանիզմների ստեղծման ծրագրի իրականացման արդյունավետության չափորոշիչներն են՝

1) մարզաբնակ երիտասարդների խնդիրներին առնչվող տեղեկատվական ծրագրերի և լուսաբանումների թիվը.

2) մարզաբնակ երիտասարդների, այդ թվում հաշմանդամ երիտասարդների իրավագիտակցության մակարդակի, երիտասարդների մասնագիտական կողմնորոշման, բիզնես սկսելու և վարելու հմտությունների, երիտասարդական հասարակական կազմակերպությունների կարողությունների և հմտությունների զարգացմանն ուղղված միջոցառումների, ինչպես նաև միջոցառումների մասնակիցների թիվը.

3) մարզաբնակ երիտասարդների հայրենասիրական դաստիարակությանն ուղղված միջոցառումների, ինչպես նաև միջոցառումների մասնակիցների թիվը.

4) մարզաբնակ երիտասարդների առողջ ապրելակերպի, ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի, սեռավարակների, թմրամիջոցների, ալկոհոլի, ծխախոտի օգտագործման և այլ վնասակար սովորությունների կանխարգելման, ինչպես նաև թրաֆիքինգի կանխարգելմանն ուղղված միջոցառումների և միջոցառումների մասնակիցների թիվը:

VII. ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄԻՑ ԱԿՆԿԱԼՎՈՂ ՎԵՐՋՆԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔԸ

9. Ծրագրի իրականացման արդյունքում ակնկալվում է՝

1) մարզաբնակ երիտասարդության տեղեկացվածության մակարդակի բարձրացում.

2) տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների՝ երիտասարդական ոլորտին առնչվող աշխատանքներում և որոշումների կայացման գործընթացներում երիտասարդների ներգրավվածության մակարդակի բարձրացում.

3) երիտասարդական կառույցների միջմարզային համագործակցության զարգացում.

4) մարզաբնակ երիտասարդության արտագաղթի և ներքին միգրացիոն գործընթացների կանխարգելմանը նպաստում: